ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Հաշվետու, արդյունավետ և գենդերազգայուն ինստիտուցիոնալ կառուցակարգեր ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում և փրկարար ծառայությունում (AEGIS)

Իրականացման ժամանակահատված: 12.09.2025 - 11.09.2028

ԱլԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 5 187 150

Ընդհանուր բյուջե: € 5 237 150

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNDP, OSCE

Նախագծի նկարագրություն:

Նախագիծը մշակվել է ՀՀ Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ), ՀՀ ոստիկանության և այլ պետական կառույցների հետ սերտ համագործակցությամբ:
Նախագծի ձևավորումն իրականացվել է՝ հիմնվելով ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ), ԵԱՀԿ-ի, ԱՄՆ/ ԹՊԻՀ-ի և այլ հիմնական գործընկերների կողմից իրականացված վերջին հետազոտությունների և վերլուծությունների վրա:
Նախագիծը համահունչ է Հայաստանի ազգային առաջնահերթություններին, այդ թվում՝ ՀՀ կառավարության 2021–2026 թվականների ծրագրին, ՆԳՆ և Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությանը և 2024–2026 թվականների գործողությունների ծրագրին, ինչպես նաև Աղետների ռիսկի կառավարման 2023–2030 թվականների ռազմավարությանը:
Նախագծի իրականացվելու է ՄԱԶԾ-ի և ԵԱՀԿ-ի կողմից՝ ՄԱԶԾ-ի ընդհանուր համակարգմամբ:
Նախագծի նպատակն է աջակցել ՆԳՆ-ի և ոստիկանության ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների ամրապնդմանը՝ նպատակ ունենալով խթանել արդյունավետ և հաշվետու ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումը, քաղաքացուն ուղղված ծառայությունների մատուցումը Ոստիկանության կողմից, ինչպես նաև նրանց հիմնական գործառույթների կատարման արդյունավետության բարելավումը:

Ակնկալվող արդյունքներ:

Ա1. Քրեական վարույթի արդյունավետ իրականացման համար ոստիկանության կարողությունների ամրապնդում:
Ա2. Համայնքային ոստիկանության բարեփոխումների իրականացման համար ՆԳՆ ոստիկանության կարողությունների ամրապնդում:
Ա3. Գենդերազգայուն և խտրականությունից զերծ ոստիկանության կարողությունների ամրապնդում:
Ա4. ՆԳՆ-ում ներքին վերահսկողության իրականացման և կայուն ոստիկանական անձնակազմի ձևավորման համար կարողությունների ամրապնդում:
Ա5. Փրկարար ծառայությունում կրթական և ընդունելության համակարգերի կատարելագործում:
Ա6. Առաջին արձագանքողների կարողությունների ամրապնդում և վերջիններիս դերի վերաբերյալ իրազեկության բարձրացում:
Ա7. Քաղաքացիական պաշտպանության ոլորտում միջգերատեսչական համակարգման ամրապնդում:
Ա8. Հիմնական գործառույթների արդյունավետ իրագործման համար Փրկարար ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում: